

ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՆՈՐ ՆՍՏԱՇՐՋԱՆ ՇՎԵՅՑԱՐԻԱՅՈՒՄ

Սույն թվականի մարտի 25-ից 31-ը Շվեյցարիայի Բոսսի քաղաքում տեղի ունեցավ ԵԵՀ-ի նախագահության և խորհրդակցական կոմիտեի միացյալ նիստը: Ինչպես հայտնված էր նախապես, 1986 թ. սեպտեմբերին Ստերլինգում ԵԵՀ-ի 9-րդ համաժողովի ընթացքում, սույն ժողովի ղեկավար կազմը համարյա ամբողջությամբ փոխվեց: Ընտրվեց գլխավոր քարտուղար հանձին Ժան Ֆիշերի և նախագահության նոր կազմը, բաղկացած 7 անդամներից, ինչպես նաև Խորհրդակցական կոմիտեի 26 անդամներ:

Առաջին անգամն է, որ Հայ Եկեղեցին դառնում է ժողովի ղեկավար մարմնի՝ Խորհրդակցական կոմիտեի անդամ:

Սույն հանդիպման նպատակն էր կազմել ԵԵՀ-ի առաջիկա տարիների գործունեության ծրագիրը: Մարտի 25-ին տեղի ունեցավ նախագահության նոր անդամների հանդիպումը: Նույն օրը Բոսսի ժամանեցին նաև Խորհրդակցական կոմիտեի անդամները:

Մարտի 26-ի առավոտյան համաժողովն սկսեց իր աշխատանքները: Նախ լսվեց գլխավոր քարտուղարի զեկուցումը, որից հետո ընտրվեցին նախագահության նախագահ ու փոխնախագահ: Մեծ նորություն էր, որ նախագահության նախագահ ընտրվեց Արևելյան Եվրոպայից՝ Լենինգրադի ու Նովգորոդի միտրոպոլիտ Նորին Սրբություն Ալեքսին: Փոխնախագահ ընտրվեց անգլիացի Ջոն Առնոլդը:

Ժողովն իր աշխատանքների ընթացքում բաժանվեց երեք կոմիտեների, որոնք քննարկեցին սույն տարվա ԵԵՀ-ի աշխատանքների ծրագիրը:

ԵԵՀ-ի կոմիտեներից երկուսի մեջ իրենց մասնակցությունն են ունենալու Հայ Եկեղեցու ներկայացուցիչները. «Խաղաղություն, արդարություն և մարդկային իրավունք» կոմիտեի մեջ իր ներկայությունն է ունենալու Դամասկոսի և Հունիստանի առաջնորդ Տ. Ոսկան եպս. Գալփաքյանը, իսկ «Մահմեդականությունը Եվրոպայում» կոմիտեի մեջ՝ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը:

Մարտի 29-ին ժողովի մասնակիցները Ժենևի զանազան եկեղեցիներում մասնակցեցին կիրակնօրյա արարողություններին: Տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը պատարագեց և քարոզ խոսեց տեղի հայոց եկեղեցում: